<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>>ԲԲԸ
0002, ք. Երևան, Ամիրյան փ. 23/1,
հեռ. (+374 10) 510-910, 8686,
էլ. փոստ bank@aeb.am
1.2.1.-ԻԱ

<<ԴԱՍԱԿԱՆ>> ԱՎԱՆԴԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N_____

Ք._____ **<<___>>_____20__թ.**

<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ն, այսուհետ՝ Բանկ, մի կողմից, և

_____

_____

ԻԱ անվանումը, ՀՎՀՀ, գրանցման հասցեն, ներկայացուցչի անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, հաշվառման հասցեն և այն փաստաթղթի տվյալները, որի հիման վրա գործում է ներկայացուցիչը,

այսուհետ՝ Ավանդատու, մյուս կողմից, այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին-առանձին նաև Կողմ, կնքեցին սույն ավանդի պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով Ավանդատուն Բանկում ներդնում է ներքոհիշյալ գումարի չափով ավանդ, այսուհետ՝ Ավանդ,

_____

Նշել ներդրվող ավանդի գումարի չափը (թվերով և տառերով) և արժույթը

1.2. Ավանդը ներդրվում է ____(_____) օրով՝ <<___>>_____20___թ._ին Ավանդատուին վերադարձվելու պայմանով:

1.3. Ավանդի դիմաց Բանկը վճարում է Ավանդատուին տոկոսներ Պայմանագրի 2-րդ մասով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

1.4. Ավանդի մուտքը, ելքը, տոկոսների վճարումը հավաստվում է ՀՀ բանկային պրակտիկայում կիրառվող վճարահաշվարկային փաստաթղթերով, եթե այլ բան չի սահմանվել Պայմանագրով:

1.5. Պայմանագրով Ավանդատուն Բանկին հանձնարարում է Բանկում գործող իր թիվ _____ բանկային հաշվից, այսուհետ՝ Հաշիվ, ընդունել Ավանդի գումարն ամբողջությամբ:

1.6. Ավանդի գումարները վերադարձվում են Ավանդատուի հետևյալ բանկային հաշվին՝_____,Ավանդի տոկոսները վճարվում են հետևյալ բանկային հաշվին՝_____:Ավանդատուն կարող է Բանկին ներկայացնել գրավոր դիմում/հանձնարարական/՝ Ավանդը վերադարձնելու և/կամ տոկոսները վճարելու այլ բանկային հաշվի:

1.7. Եթե Ավանդատուն պահանջում է վերադարձնել Ավանդը Պայմանագրի 1.2 կետով սահմանված ժամկետից շուտ, ապա Ավանդը վերադարձվում է Բանկի համաձայնության դեպքում:

1.8. Սույն ավանդատեսակով ներգրավվող ավանդների/ մնացորդի/ համար Բանկի վարչության կողմից հաստատվող տեղեկատվական ամփոփագրով կարող է գործել նվազագույն շեմ, որից պակաս չի կարող կազմել ներդրվող ավանդը/մնացորդը/, ինչպես նաև առավելագույն շեմ, որից ավել չի կարող կազմել ներդրվող ավանդը/մնացորդը/, բացառությամբ Պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանված դեպքերի:

2. ԱՎԱՆԴԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՎԱՆԴԻ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Ավանդի դիմաց հաշվարկվում են տոկոսներ՝ տարեկան _____(_____)% տոկոսադրույքի չափով, փաստացի օրերի դիմաց տարին ընդունելով 365 օր, նահանջ տարին՝ 366 օր:

2.2. Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը կազմում է _____(_____)%:

2.3. Ավանդի տոկոսները հաշվարկվում են Ավանդը Բանկում ընդունվելու օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու նախորդ օրը:

2.4. Ավանդի տոկոսները Ավանդատուի ցանկությամբ վճարվում են հետևյալ արժույթով և պարբերականությամբ՝

_____ _____

Ավանդի արժույթով/ ՀՀ դրամով ամսականժամկետի վերջում

2.5. Ավանդը կամ դրա մասը մինչև Ավանդի վերադարձման ժամկետի լրանալը պահանջվելու և Բանկի համաձայնությամբ վերադարձվելու դեպքում՝ համապատասխանաբար Ավանդի կամ պահանջվող մասի դիմաց Պայմանագրի 2.1 կետով սահմանված տոկոսների փոխարեն հաշվարկվում են տոկոսներ՝ տարեկան 0 % տոկոսադրույքի չափով, իսկ եթե արդեն Ավանդատուին վճարվել են Պայմանագրի 2.1 կետով սահմանված տոկոսները, ապա վճարված տոկոսագումարի չափով Ավանդը համարվում է վերադարձված:

2.6. Ավանդի տոկոսները Ավանդատուի կողմից չստանալու դեպքում՝ դրանց վրա տոկոսներ չեն հավելագրվում:

2.7. Ավանդի վերադարձման ժամկետը լրանալու օրը Ավանդը չպահանջվելու դեպքում (եթե Ավանդի վերադարձման այլ ժամկետ չի սահմանվել Կողմերի համաձայնությամբ)՝

☐ Ավանդատուն համաձայն է (եթե Ավանդատուն համաձայն է վանդակում նշում է ✓, եթե համաձայն չէ՝ Z), որ Ավանդի վերադարձման ժամկետը ինքնաբերաբար երկարաձգվի նախորդ ժամկետով (շարունակաբար, բայց ոչ ավել երեք անգամից) Ավանդի դիմաց հաշվարկվեն տոկոսներ տվյալ ավանդատեսակի համար երկարաձգման օրվա դրությամբ Բանկի սահմանած տոկոսների չափով և կիրառվեն տվյալ ավանդատեսակի տեղեկատվական ամփոփագրով սահմանված այլ պայմանները:Եթե տվյալ ավանդատեսակի գործողությունը Բանկի կողմից դադարեցվել է, ապա Ավանդի վերադարձման ժամկետը ինքնաբերաբար չի երկարաձգվում և մինչև Ավանդի փաստացի պահանջվելը Ավանդի դիմաց հաշվարկվում են տոկոսներ Բանկում գործող բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների համար Բանկի սահմանած տոկոսների չափով:

2.8. Ավանդատուն Ավանդին լրացուցիչ գումարներ՝

2.8.1. չի կարող ավելացնել ☐

2.8.2. կարող է ավելացնել ☐*

*Ավանդատուի կողմից 2.8.2 կետի ընտրության դեպքում՝ Ավանդատուն Ավանդին լրացուցիչ գումարներ կարող է ավելացնել (որոնց նկատմամբ հաշվարկվում են Պայմանագրի 2.1 կետով սահմանվող տոկոսները) միայն 183 օր կամ ավելի ժամկետով ներդրված (երկարաձգված) Ավանդի վերադարձման ժամկետին նախորդող մինչև 180-րդ օրը և առավելագույնը Պայմանագրի կնքման (երկարաձգման) պահին ներդրված Ավանդի գումարի հնգապատիկի չափով, բայց ոչ ավել առավելագույն շեմից:

2.9. Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել Պայմանագրի 2.1 կետում նշված տոկոսները՝ Պայմանագրի 1.2 կետով սահմանված ժամկետին Ավանդը վերադարձվելու պայմանով:

2.10. Եթե Ավանդի վերադարձման ժամկետը լրանալուց Ավանդը չի պահանջվել և Ավանդի վերադարձման ժամկետը չի երկարաձգվել, ապա մինչև Ավանդի փաստացի պահանջվելը Ավանդի դիմաց հաշվարկվում են տոկոսներ Բանկում գործող բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների համար Բանկի սահմանած տոկոսների չափով:

2.11. Ավանդատուն (նրա ներկայացուցիչը) նույնականացվում է անձը հաստատող փաստաթղթով Բանկ ներկայանալու և նույնացվելու միջոցով: Ավանդատուն համարվում է նույնականացված նաև ավտոմատ ինքնասպասարկման սարքերով, համացանցով, էլեկտրոնային միջավայրում կատարվող գործարքներով՝ Ավանդատուի նույնականացման տվյալը (PIN կոդ (ծածկագիր), քարտի CVV կոդ, նշանաբառ, գաղտնաբառ, նույնականացնող այլ միջոց) կիրառվելու դեպքերում:

2.12. Ավանդի պայմանները սահմանվում և կարգավորվում են Պայմանագրով, ինչպես նաև Բանկի վարչության կողմից հաստատված Ավանդի տեղեկատվական ամփոփագրով, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Տեղեկատվական ամփոփագիրը հրապարակվում է Բանկի ինտերնետային կայքէջում (www.aeb.am) և տրամադրվում է Ավանդատուի առաջին իսկ պահանջով անվճար: Տեղեկատվական ամփոփագրում Բանկն իրավունք ունի միակողմանի կատարել փոփոխություններ/լրացումներ, որոնք ուժի մեջ մտնելուց 7/յոթ/ աշխատանքային օր առաջ հրապարակվում են Բանկի կայքում և ուղարկվում են Ավանդատուի էլեկտրոնային փոստի հասցեին:

2.13. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ դատական ակտերի, հարկադիր կատարման մարմինների, հարկային մարմինների որոշումների հիման վրա, ինչպես նաև Ավանդով ապահովված պարտավորությունների և/կամ Բանկի նկատմամբ Ավանդատուի պարտավորությունների չկատարման դեպքում՝ Ավանդը կարող է անակցեպտ կարգով բռնագանձվել, որից հետո 30 օրացուցցային օրում Բանկը պարտավոր է դրա մասին տեղեկացնել Ավանդատուին՝ տրամադրելով Հաշվի քաղվածք վերջինիս հաղորդակցման եղանակով:

2.14. Ավանդատուին վճարվող տոկոսները հարկվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափով:

3. ԱՎԱՆԴԱՏՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Ավանդատուն իրավունք ունի՝

3.1.1. Բանկից պահանջել վճարելու Ավանդի դիմաց տոկոսներ Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետներում:

3.1.2. Բանկից պահանջել ապահովելու Ավանդի գաղտնիությունը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.1.3. Ավանդն ավելացնել Պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով:

3.1.4. Բանկից պահանջել վերադարձնելու Ավանդը դրա ժամկետը լրանալուց, ինչպես նաև Բանկի համաձայնության դեպքում՝ մինչև Ավանդի ժամկետի լրանալը:

4. ԱՎԱՆԴԱՏՈՒԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

4.1. Ավանդատուն հաստատում է, որ Բանկի կողմից Ավանդատուին տրամադրման ենթակա տեղեկատվությունը, ներառյալ՝ քաղվածքներ, ծանուցումներ, այլ տեղեկություններ Ավանդատուին տրամադրելու լեզուն և կապի միջոցն է՝

հայերեն/անգլերեն _____ Էլեկտրոնային փոստի հասցեն _____

4.2. Ավանդատուն հաստատում է, որ մինչև Պայմանագրի կնքումը Բանկից ստացել է Ավանդի տեղեկատվական ամփոփագիրը:

5. ԲԱՆԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Բանկի կողմից Ավանդը վերադարձնելու կամ տոկոսները վճարելու պարտավորությունը չկատարելու կամ ուշացնելու դեպքում՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար Բանկը վճարում է տույժ՝ չվճարված /չվերադարձված/ գումարի 0.02 % չափով:

5.2. Բանկը երաշխավորում է Ավանդի վերադարձը իր ակտիվներով:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Ավանդը Բանկում փաստացի ընդունվելու օրվանից և գործում է մինչև Ավանդը Ավանդատուին ամբողջությամբ վերադարձվելը:

6.2. Այն հարցերը, որոնք չեն կարգավորվում Պայմանագրով, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

6.3. Կողմերի միջև ծագող վեճը քննելու համար կողմն իր պահանջը կարող է ներկայացնել՝

6.3.1. ՀՀ իրավասու դատարանին (կողմերը համաձայն են, որ գործի քննությունը դատարանը իրականացնի պարզեցված վարույթի կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով), կամ

6.3.2. նոտարին (եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն պահանջը ենթակա է քննության նոտարի կողմից «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով), կամ

6.3.3. Հայաստանի Բանկերի Միության «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺ» հիմնարկին, այսուհետ՝ Արբիտրաժ», Արբիտրաժի վայրը՝ «ՀՀ, քաղաք Երևան, Կորյունի փողոց, 19ա շենք, 6-րդ հարկ», կայքէջ՝ www.uba.am: Կողմերը գալիս են արբիտրաժային համաձայնության, որ Արբիտրաժի կողմից վեճի քննությունն իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերին համապատասխան, միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման, քննությունը իրականացվելու է մեկ արբիտրի կազմով, արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, ծանոթացել են Արբիտրաժում վեճի քննության դեպքում կողմերի իրավունքների և պարտավորությունների մասին ամբողջական տեղեկատվությանը:

6.4. Կողմերը համաձայն են, որ բացառությամբ Բանկի կողմից Ավանդատուին ուղարկվող պարտադիր տրամադրվող տեղեկատվության, կողմերի միմյանց ուղարկվող ցանկացած գրություն, պահանջ, հաղորդում, տեղեկացում կամ այլ ծանուցում, ինչպես նաև կողմին ուղարկվող դատավարական, արբիտրաժային ծանուցումներ, որոշումներ, ակտեր և/կամ այլ փաստաթղթեր, հարկադիր կատարողի կողմից ուղարկվողի որոշումներ և/կամ այլ փաստաթղթեր (այսուհետ բոլոր միասին՝ Ծանուցում) կարող են ուղարկվել ստորև նշված կողմի փոստային կամ էլեկտրոնային փոստի հասցեներով, ընդ որում կողմերը համաձայն են, որ

Ծանուցումը կհամարվի կողմին պատշաճ հանձնված՝ վերջինիս փոստային հասցեով ուղարկվելուն հաջորդող 7-րդ օրը, իսկ էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվելու դեպքում՝ ուղարկման օրը.

6.5. Ավանդատուն

Բանկ	Ավանդատու
փոստային հասցե՝ ՀՀ, 0002 ք. Երևան, Ամիրյան 23/1	փոստային հասցե
էլ. փոստի հասցե՝ bank@aeb.am	էլ. փոստի հասցե

դատուն կարող է Պայմանագրից բխող բողոք-պահանջները ներկայացնել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, դեպքերում ու պայմաններով: Բանկը հրաժարվել է վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի այն որոշումները, որոնցով գույքային պահանջի չափը չի գերազանցում 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամը:

6.6. Կողմերի համաձայնությամբ Պայմանագիրը համարվում է Կողմերի միջև կնքված՝ Բանկի համապատասխան էլեկտրոնային սարքում Կողմերի ստորագրելով: Այդ ձևով կնքված Պայմանագիրն ուղարկվում է Ավանդատուի էլեկտրոնային փոստի հասցեին մեկ աշխատանքային օրվա ընթացքում և ձեռք է բերում Կողմերի ձեռագիր ստորագրությամբ կնքված թղթային պայմանագրին համարժեք իրավաբանական ուժ: Ավանդատուի պահանջով Պայմանագիրը կնքվում է Կողմերի ձեռագիր ստորագրությամբ՝ փաստաթղթային ձևով, երկու օրինակից և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

6.7. Պայմանագիրը Բանկի կողմից ստորագրվում է երեք աշխատակցի կողմից և կնքվում է Բանկի կլոր կնիքով:

7. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱՆԿ	ԱՎԱՆԴԱՏՈՒ
<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Ներկայացուցչի ԱԱՀ_____ Լիազորագրի ամսաթիվ,համար_____ _____ ներկայացուցչի ստորագրություն _____ Անուն, ազգանուն, ստորագրություն _____ Անուն, ազգանուն, ստորագրություն	_____ Իր անձի անվանում _____ ԻԱ ներկայացուցչի անուն ազգանուն Կ.Տ _____ ստորագրություն